

2488.2489
2490; 2491
2492

Plenary

91-94

Plenary


90

2010

2001

117

Կ Ո Ն Դ Ա Կ
Հ Ա Ր Մ Ա Ն Ե Ա Ց



(2089)
40



93-2015

1883



**ՄԱՂԱՔԻԱ՝ ԵԱՌԱՅ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ**

ողորմութեամբ Աստուծոյ Հօր և Հնոր-
հիւ Ս. Հոգւոյն և կամօք աղգին Արք-
եպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ՝ և Պատ-
րիարք Հայոց Թուրքիոյ ընծայէ ողջոյն
և օրհնութիւն Աստուածային՝ որոց
հանդերձեալ են պսակիլ ի միութիւն
ամուսնութեան հարազատ օրդւոցդ Հա-
յաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյ։
Պսակը Ս. Եկեղեցւոյ եօթն խորհուրդ-
ներէն մէկն է, որով ցմահ այր և կին
իրարու հետ կը կապուին անբաժանե-
լի կերպիւ։ Այս խորհրդոյն կատարման
ատեն պսակադիր Քահանային ըրած

հարցումները նոյն անքակտելի միութեան համար պսակելոյ սուրբ ուխտ մը ընել կուտան առաջի Աստուծոյ եւ եկեղեցւոյն Գրիստոսի, և այս միութեան ուխտն անդրժեղի է. աղքատութիւն, վիշտ, հիւանդութիւն չեն զօրեր ուխտադիրներն իրարմէ բաժնել: Ուստի ամենէն առաջ պէտք է որ երկու կողման՝ այսինքն, հարսին և փեսային առանձին կատարեալ հաւանութեամբն և անտարակուսելի համոզմամբն ըլլայ նշանըն ու պսակը: Եւ ահա ըստ որոշման Ազգ. Կրօնական Ժողովոյ ամուսնացող կամ ամուսնանալի անձանց պարտաւորութիւնները համառօտիւ այսպիսի տեսրակի մը մէջ նշանակելով կը պարտաւորենք ամեն նշանտուութեան ատեն թէ՛ փեսային և թէ՛ հարսին կողմը զատ զատ տալ այս տեսրակներէն:

Հայր և Մայր ըլլալու հանդերձեալ անձինք և ծնողք զիտնալու են որ աղգմը կազմողներն ընտանիքները լինելով՝ այն աղգներն որ ընտանեկան առաքինութեամբ զարդարեալ ընտանիքներ շատ

ունին, անոնք միւս աղգերը կը գերազանցեն որ ճշմարիտ հայրութեան և մայրութեան միակ պարտքն է իրենց զաւակները նախ բարի մարդ և հեռաբար բարի Գրիստոնեայ ընել: Հայրը իր գորովանաց հետ, և Մայրը իր կաթին հետ կրօնական և բարոյական սկզբունքները կը պարտաւորին տպաւորել իրենց զաւակներուն սրտից և մտաց մէջ, նայելու է որ այն մատաղ սրտերը մոլութեանց սերմ չմտած՝ առաքինութեան համար մշակեն զանոնք Աստուածապաշտ աղգասէր և մարդասէր ընելու համար ինքզինքնին բարի օրինակ ընծայեն: Ասոր համար ալ զիրար մաքուր սիրով, անկեղծ սրտով եւ ճշմարիտ գորովով սիրելու են, Հարք և Մարք լեզունին, սրտերնին և վարքերնին ամեն աղտեղութենէ ազատ պահելու և իրենց անարատ վարքովը զաւակներուն աչքին առջեւ առաքինութեան կենդանի դիրք մը տալու են: անձին օրինակը հազար խօսք կարժէ: Բարի Հայրն ու Մայրն այնչափ գովելի են որ իրենց որդւոցն աշխարհի բարութիւն

ները ժառանգութիւն ձգելէն ետ-
քը՝ երկինքն ալ կը ժառանգեցնեն.
Ծնողքի մը առաքինութիւն յորդոց
յորդի կրնայ օրինակ ըլլալ եւ շարունա-
կել, և մինչեւ երկինքի մէջ իրենց թո-
ռանց թոռներուն թոռները այսինքն ան-
համար բազմութիւն մը կրնայ ներկայա-
ցնել. բարի ծնողքի համար ինչ անպա-
տում երջանկութիւն է ասիկա. քանզի
այնպիսի ընտիր ծնողք՝ ոչ հարստութեան,
ոչ փառքի, ոչ սնտոի հանգամանաց հա-
մար զիրար և իրենց զաւակունքը կը
խնամեն, այլ այրն իր կնոջը խնամք տա-
լած ատեն ինքզինքը խնամած կը հա-
մարի, նոյնպէս կինն իր կողմանէ. Դարձ-
եալ, ինքզինքնին միայն զաւակներուն ա-
պագային համար անոնց հոգեւոր և մարմ-
նաւոր երջանկութեանը համար մէյ մէկ
պարտաւորեալ անձնուէր պաշտօնեայ կը
հաւատան. իրենց որդւոց առողջութեան
և ճշմարիտ կրթութեանը հոգ կը տանին.
անոնց արտաքին զարդերէն աւելի սիր-
տերը, հոգիները զարդարել՝ անոնց, հո-
գին առաքինութեանց, և մարմինները

աշխատութեան մէջ զօրացնել կաշխատին
ամենայն փութով. Առաքինի այրը կամ
կինը՝ մինչեւ անգամ մոլութեան կամ
օխալանաց մէջ՝ մէկն զմիւսն ինկած տե-
սածատեն, զգալով իր կողակցութեան
կամ այրութեան պարտքը, առաւել սի-
րով և խնամով կ'զթայ իր ընկերոջը վրայ,
և բարի մարդուն հետ կենակցելը գիւրին
բան մ'է, իսկ անբարի մարդուն հետ կե-
նակցելով համբերութեամբ չար ճամբէն
ի բարի դարձնելն դժուար բան. հետեւա-
բար գովելի առաքինութիւն մ' է ըսե-
լով անանկ գիւցազնական յաղթող սիրտ
կըտած է՝ որ Յսի. Քրիստոսի Տեառն մերոյ
խաչին անուամբ պատուանդան կընէ իր
սիրտը. այսպիսիք աղէք հասկցած են որ
Քրիստոնէին կեանքը խաչ է. որուն ար-
ժանանալու համար առաքինի ըլլալու է.

Առաքինի ծնողք աշխատասէր կըլլան և
իրենց զաւակներուն սէրը ղիրենք ամե-
նայն մեղաց մայրն եղող ծուլութենէն ա-
զատ պահելով, եթէ հարուստ ալ չկրնան
ըլլալ՝ խիստ քիչ կը պատահի որ աղքատ
ըլլան. Առաքինի ծնողք խնայող, տնտեսա-

գէտ ալ կըլլան, և իրենց ծախքերը եկամուտներուն համեմատ կընեն, որպէսզի իրենց ու զաւակներուն ապագայն թշուառութեան չմատնեն և այս զգուշութիւնն ամենամանր պարագաներու մէջ ալ ընելու են. վառնդի խիստ շատ անգամ շատ փոքրիկ անզգուշութիւնները սովորութեամբ մեծամեծ մոլութեանց կը դառնան: Ուստի այս խնայողութիւն որ ընտանեկան առաքինութեանց շէնքին առաջին քարն է, փեսան և հարսն իրարու հետ կապուելու պատրաստուած կէտէն առաջ սկսելու է, այսինքն հարսանիքէն առաջ: Ո՛րչափ անխոհմութիւն է մեծամեծ ծախքերով հարսանեաց հանդէսներ կատարել, մանաւանդ անոնց՝ որ անկէ անդին ձեռքերնին բան չի մնար, բոլոր ստացուածքնին այն կարճատեւ օրուան մէջ կը մոխնէ: Ասկէց զատ՝ գիտնալու են երիտասարդք և կուսանք, որ իրենց ամենէն մեծ հարստութիւնը խնայողութիւնն է, փեսային գանձը իր անխոնջ աշխատութիւնն է, հարսին օթիտն ալ իր առաքինութիւնը. ջաւալի է այն անձանց

վիճակն որք փոխանակ իրենց ապրուստն Աստուծոյ և իրենց ձեռքերէն փնտռելու, իրենց կնոջ ստակին յոյս կը դնեն և այն դրամաթիտն քրախոյն քսուածն ողկալի ու արդէն աղբային հոգեւոր ժողովներով դատապարտուած պահանջման պայմանաւ կուզեն ամուսնանալ:

Ամուսնութեան պսակի խորհուրդը սուրբ է և հոգեւոր, ուրեմն հոգեւոր լըջութեամբ և ջերմեռանդութեամբ կատարելու է: Շատ աղէկ կըլլայ, եթէ Ս. Եկեղեցւոյ մէջ կատարուի և ոչ տունէքը, զիանալով որ միայն հարկեցուցիչ պատճառաւ վերջին ժամանակներս տուները Պսակ կատարելու սովորութիւնը քաղաքական նկատմանց պատճառաւ մըտած է միայն ի կ, Պոլիս, և դեռ Հայաստանի գաւառները միշտ Եկեղեցւոյ մէջ կը կատարեն այս սուրբ խորհուրդն, ինչպէս որ մեր երանեալ նախնիք սահմանած են.

Կը պատուիրենք նաև որ այս սրբազան խորհուրդն՝ որ Քրիստոսի Եկեղեցւոյ մութեան օրինակ ու խորհուրդն է՝ Աստուածային երգերով կատարուի, արբե-

յութիւնք եւ խալտառակութիւնք այս
տուրք խորհուրդոյն անարգանք կը բերէն։
Այն ահաւոր կէտին՝ յորում՝ Քահանայն
Ղերմաջերմ աղօթքներ կ'ընէ հարսն ու
փեսայն սրտերնին Աստուծոյ նուիրելով,
հանդիսականք ուխտիւք և ջերմեռանդու-
թեամբ խնդրելու են ի Քրիստոսէ, որ սէր
և սրբութիւն շնորհէ անոնց, ըստ որում
հարսն և որսն երուն պարաքը վկայութենէ
զատ՝ աղօթել է նաեւ, որ այն կոչումը
օրհնէ ազգերու յաւիտենական Հայրը։

Ի վերջոյ կը յայտնեմք որ այրը պար-
տաւոր է իր կիներ իր աշխատութեամբը
պահել, իսկ կինը պարտաւորեալ է ընտա-
նեկան պարաքերը կատարել անպակաս։
Այրը գլուխ է իւր կնոջ ուստի և կինը պար-
տաւոր է հնազանդ ըլլալ իւր ամուսնոյն։
Երբ կիներ իւր հարուստութեամբն ապրեցը-
նէ իր այրն ու ընտանիքը այն տանը մէջ
ընտանեկան առաքինութիւնը, չ'ըսենք
անհնար, այլ դժուարին կըլլայ։ Ասանկ
պարագաներու մէջ օտար ազգաց ամեն
օրինակին ալ հետեւին աղէկ չէ։ Առա-
ւել աղէկ է Աստուծոյ հրամանին հնա-

ղանդ և ծնողական պարտաւորութեանց
ուշադիր ըլլալով երջանիկ լինել, քան թէ
օտարներու անկարգ սովորութեանց հե-
տամուտ ըլլալով ապերձանիկ լինել։

Արդ՝ հայրական սիրով կը յորդորեմք
զձեզ, սիրելի որդեակք մեր ի Քրիստոս՝
որ վերողբեալ համառօտբայց ամենակա-
րեւոր խրատաբանութեան ուշադրութիւն
մատուցանելով այս ժամէն, այսինքն ձեր
նշանուելու ատենէն սկսիք ձեր սիրտե-
րը պատրաստել ամուսնական և ծնողա-
կան առաքինութեանց և ամէն շանք ընէք
այնպիսի լաւ յատակադործի վրայ հիմ-
նել ձեր ընտանեկան կենաց շէնքը, որ
աշխարհի ամեն յաջողութեանց և ձա-
խորդութեանց ալեաց առջև անխորտա-
կելի մնայ, և Աստուած՝ որ մեր երա-
նաշնորհ հարց ամուսնութիւնն օրհնեց
Իր միակ յաւիտենական Որդւովն՝ օրհնէ
և զձեզ և ձեր զաւակները։

Այս կարեւոր խրատաբանութենէ ետ-
քըն արժան կը համարեմք թէ՛ փեսացուն
թէ՛ հարսնուն և կնքահօր կողմանէ
Նշանտուութեան և պսակի օրը՝ թէ Ազգ-

Կեդրոնական դրամարկեղ և թէ տան-
երէց քահանայներուն վճարուելիք նը-
ուէրները յատուկ ցուցակաւ նշանակեալ
տետրակիս ներքեւ, և յորդորել զա-
մենքդ, որ յօժարակամ և զուարթ
սրտիւ զանոնք հասուցանելու փոյթ ու-
նենաք:

Ողջ լերուք և օրհեալք ի գլխոյն Եկե-
ղեցւոյ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
տոսէ և ի Սրբոց նորա, և ի մէնջ Ամէն:

Նշանադիր եւ Պատկադիր Քահանային
մրայ պարտք կը դնեմք, որ այս խրատական
Կոնդալը նախ՝ առանձինն Հարսնացուն եւ
Փեսայուն ի ժամու նշանադրութեան,
եւ ապա ի ժամ պսակին առաջի պսակելոց
եւ ժողովրդեան՝ բարձր ձայնով կարգան եւ
բացատրեն:



Ա. ՅՈՒՅԱԿ

Բ. ՅՈՒՅԱԿ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐՍՄԱՐԿԵՂ ՎՃԱՐԵԼԻ

Ա.Ա.ա.	Փետացոսին կողմանէ		Կողմէ Զարմանքին	Երկու կողմէ Կոնստանդին	Փետացոսին կողմէ Զարմանքին	մէ Զարմանքին
	Ըստ Զանոյից	Ըստ Զանոյից				
Ն. »	1000	500	1500	20	500	500
Գ. »	600	300	900	20	300	300
Դ. »	400	200	600	10	200	200
Ե. »	300	150	450	10	150	150
Զ. »	200	100	300	10	100	100
Է. »	150	75	225	10	75	75
Ը. »	100	50	150	5	50	50
Թ. »	80	40	120	5	40	40
Ժ. »	50	25	75	5	25	25
ԺԱ. »	Զրի	Զրի	Զ.ի	Զ.ի	Զ.ի	Զրի

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

1. Ինչպէս որ կը տեսնուի Կնքահօր սիւնակին մէջ, Կնքահօր վճարելու Թագավերաց անունն նուէրն, անոր նոյնչափը Փետացուն եւ նոյնչափն ալ Կնքահայրը պարտաւորեալ են վճարել Աղջրկան Քահանային հարստաւ ժամանակ:

2. Թագաւորութեան ժամանակ տաներէց Բահանայն զինի բաժնած ատեն կրնայ Հանդիսականներէն կամաւոր նուէր ընդունիլ:

ՏԱՆԵՐԻՅ ԲԱՀԱՆՍՅԻՆ ՎՃԱՐԵԼԻ

Ա. Աստ.	Թե՛ փետացոսին եւ հարմացոսին կողմանէ		Կողմէ Զարմանքին	Կողմէ Զարմանքին
	Ըստ Զանոյից	Ըստ Զանոյից		
Ն. »	—	—	—	—
Գ. »	—	—	—	—
Դ. »	200	200	800	150
Ե. »	150	150	500	120
Զ. »	100	100	400	100
Է. »	75	75	300	80
Ը. »	60	60	250	60
Թ. »	50	50	200	40
Ժ. »	30	30	150	20
ԺԱ. »	Զրի	Զրի	Զրի	Զրի

3. Երբոր գտնուի որ ոչանաւոր թնէ ետքը մէկ կամ միւս կողմէն որ եւ է պատճառ մը նշանը ետրել հարկ ըլլայ. բայց որովհետեւ Աղջրկան վարչութեան նշանաւորութեան որը երբեք տեք վճարուած գումարին նոյնչափը զիտի վճարուի իբր տուգանք Աղջրկան Կեդրոնական սընտուկին:

4. Զրի կը կատարուին միայն այն աղջրկանց նշանաւորութիւն՝ որոց քաւորութիւնն վկայուած եւ հաստատուած է թաղին Եկեղեցւոր Թաղական խորհրդէն:

Գ. ՅՈՒՑԱԿ

Ս.ՄՈՒՍՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՈՅ ՀԱՄԱՐ

ԿԵԴՐ. ՍՆՏՈՒԿՆ ՎՃԱՐԵԼԻ

		Կողմացուին Կողմանէ	Հարմարուին Կողմանէ
Ա. Ստոր/ճ.	Ըստ Հաճոյից	Ըստ Հաճոյից	Ըստ Հաճոյից
Բ. »	200	200	
Գ. »	120	120	
Դ. »	80	80	
Ե. »	60	60	
Ձ. »	40	40	
Լ. »	30	30	
Ը. »	20	20	
Թ. »	10	10	
Ժ. »	5	5	

2483
2489
2480
2481
2482

ՀՀ Ազգային գրադարան



NL0029460

ՀՀ Ազգային գրադարան



NL0029459

ՀՀ Ազգային գրադարան



NL0029458

ՀՀ Ազգային գրադարան



NL0029457

ՀՀ Ազգային գրադարան



NL0029461

